ք. Մարտունի

12.06.2025թ.

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ** 165

Հիմք ընդունելով Ն.Գետաշեն բնակավայրի բնակիչներ Նինա Զախարյանի և Իզոլդա Կիրակոսյանի դիմումը և դիմումի պահանջը, տեղում ուսումնասիրութուն կատարած համապատասխան մասնագետների արձանագրությունը, առաջարկում եմ ավագանու քննարկմանը ներկայացնել Մարտունի համայնքի Ն.Գետաշեն բնակավայրի բնակիչ Հ.Ղալաչյանին սեփականության իրավունքով պատկանող 05-066-0142-0045 կադաստրային ծածկագրով հողամասի և համայնքային սեպականություն հադիսացող հողամասերի սահմանի երկայնքով առակա ընդհանուր թվով 25 բարդի, ուռի և հացենի տեսակի ծառերի ինչպես նաև Հ.Ղալաչյանի և Ի.Կիրակոսյանի սեփականություն հանդիսացող հողամասերի սամանագծի երկայնքով ընդհանուր թվով 10-ը բարդի, ուռի և հացենի տեսակի ծառերի հատման հարցը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ և ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝

Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

գերխոնավության պատճառ են հանդիսանա...

Ք.Մարտունի 05.06.2025թ.

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մենք, Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Հ.Հարությունյանս, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ Հ.Միրզաջանյանս, իրավաբանական բաժնի պետ Ա.Քոչարյանս և Ն.Գետաշեն բնակավայրի վարչական ղեկավար Ռ.Զուլոյանս տեղում ուսումնասիրեցինք Ն.Գետաշեն բնակավայրի բնակիչներ՝ Նինա Զախարյանի և Իգոլդա Կիրակոսյանի կողմից Մարտունի համայնքի ղեկավարին հասցեագրված ս/թ հունիսի 02-ի մտից N3600-Ք դիմումի պահանջը: Ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ Ն.Գետաշեն բնակավայրի բնակիչ Հ.Ղալաչյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող 05-066-0142-0045 կադաստրային ծածկագրով հողամասի սահմանագծի երկայնքով (մոտավորապես 120 մետր) առկա էր շուրջ 80-90 տարբեր տեսակի դեկորատիվ ծառեր, որոնցից ընդհանուր թվով 40-ը բարդի, հացենի և ուռի տեսակի էր և մոտավոր բարձրությունը կազմում էր 10-14 մետր: Իրավիճակը գնահատելիս պարզեցինք, որ ամռան և աշնան ամիսներին նշված թաղամասում առաջանում է հակասանիտարական վիճակ, ծառերի ստվերը հարևանությամբ գտնվող բնակելի տների լուսաթափանցելիության ինչպես նաև գերխոնավության պատճառ են հանդիսանում: Նշված տարածքում ծառերի ստվերի պատճառով անօգտագործելի է դարձել շուրջ 1500-2000 մ$^2$ հողամաս: Ծառերի արմատային համակարգը արդեն իսկ խալխլել էին հարևանությամբ գտնվող շինության հիմքերը, ինչպես նաև խոչընդոտում էին թաղամասը սնուցող ոռոգման առվի ջրթողունակությանը:

Արձանագրությունը կազմվեց Ն.Գետաշեն բնակավայրի բնակիչներ Ն. Զախարյանի և Ի.Կիրակոսյանի N3600-Ք դիմումին կցելու և օրենքով սահմանված կարգով հարցին դրական լուծում տալու համար:

Հ.Հարությունյան

Ա.Քոչարյան

Հ.Միրզաջանյան

Ռ.Զուլոյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՄՏԻՑ N 3600 ֆ
«03» 06 2025թ.

Մարտունու համայնքի
ղեկավար՝
Հովհաննես Հովեյանին
Ն. Գետաշեն բնակավայրի
բնակիչներից

Դիմում

Հարգելի պարոն Հովեյան մեր հարևանությամբ
ապրող Ղալայան Հովսեփը մեր և իր
գետամերձ հողամասերի առանձնացված ծառ ջրի ջրանցք
գցել է քարերի վրանակի և ... վրանակի
30 և ավել ծառեր, որոնք երկար տարիներ
այգում մեծացել են և խնամվել են մեր
հողամասերը զարդարում էին ինչ այժմ նա
այդ ծառերը արդեն բոլ հանել չէ նաև
պատերի և կտուրի: Խնդրում եմ ձեզ
համապատասխան մասնագետների միջոցով
ներկայացնել հարցին դրա համապատասխան
լուծում:

Դիմողներ՝ Ղալայ Երվանդ Ծատուրյան
Գոհար Կիրակոսյան

02.06.2025թ.

/ 094041276 /
077508748